«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Ընտանեկան հոգեբանություն, կոնֆլիկտներ :

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Սահակյան

Ուսումնական հաստատություն՝ համ. 113 միջ. Դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ 1Դերաֆունկցիոնալ համակարգը ժամանակակից հայ ընտանիքում_____4

Գլուխ 2. Հայ ընտանիքի հասարակական էությունը_____13

Եզրակացություն_____19

Օգտագործված գրականության ցանկ_____20

Ներածություն

Ընտանիքը սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ հանրայնորեն պայմանավորված է, այդուհանդերձ ունի հարաբերական ինքնուրույնություն, քանզի կրում է բազմաթիվ այնպիսի որակապես տարբեր հայտանիշներ, որոնց շնորհիվ էլ հենց մարդու կյանքում խաղում է գլխավոր դեր:

Առանձին հայտանիշների ձևափոխման ճանապարհով ընտանքիը փոփոխվում, հարմարվում է այն կոնկրետ պատմական իրադրությանը, որին ներհյուսված է մարդկանց կյանքը: Ընտանիքի այդ յուրահատկությունը նշում էր դեռևս Մարքսը. «Վերցրեք հասարակության զարգացման փոխանակման և սպառման որոշակի աստիճան, և դուք կստանանք որոշակի հասարակարգ, ընտանիքի, շերտավորումների կամ դասակարգերի որոշակի կազմակերպություն, մի խոսքով որոշակի քաղաքացիական հասարակություն»:

Ընտանիքի ինստիտուտը հասարակության և մշակույթի պատմական փոխազդեցության արդյունք է և, որպես երևույթ, իր մեջ ինտեգրում է երկու սկիզբ: Մի կողմից այն կազմավորվում էր «ինքնածին» երևույթների ազդեցության տակ, մյուսից՝ «կարգադրված» ընթացակարգերով, որպես մարդկանց բնական տպավորությունների հակազդում: Որպես ինստիտուցիոնալ երևույթ, ընտանիքի գործառումը ենթադրում է իրավունքի ինստիտուտի, պետական հիմնարկությունների իրավական ու քաղաքական կարգավորիչ ներգործություն: Հետևաբար, ո՞րն է ընտանիքի՝ որպես սոցիալական խմբավորման, հիմնական ցուցանիշը:

Այդ ցուցանիշների մասին էլ ես հանգամանորեն կներկայացնեմ իմ այս աշխատության մեջ:

Գլուխ 1.Դերաֆունկցիոնալ համակարգը ժամանակակից հայ ընտանիքում

Քանի որ ընտանիքը փոքր ու առաջնային սոցիալական խումբ է և, ուրեմն, սոցիալական հոգեբանության ուսումնասիրության օբյեկտ, ապա ընտանեկան ֆունկցիների պարզաբանման նպատակով օգտվենք այդ գիտության «սոցիալական դեր» հասկացությունից: Տվյալ դեպքում խոսքն ընտանեական դերերի մասին է, որը եթե ոչ գլղավոր, ապա էական ցուցանիշներից է:

Ի՞նչ է ներընտանեկան դերը, ի՞նչ դիրքեր և դերեր ունեն ընտանքի անդամները:

Եթե ուշադրությամբ դիտենք մարդու վարքը հասարակության մեջ, ապա կտեսնենք, որ նա, իսկապես, տարբեր իրադրություններում տարբեր դերեր է կատարում, հանդես գալով որպես դերասան, բայց այնպիսի դերասան, որը խաղում է հասարակական բեմերի, իրական կյանքի բեմերի վրա:

Փողոցում մենք անցորդ ենք, դպրոցում՝ աշակերտ կամ ուսուցիչ, քաղաքային երթևեկության միջոցներում ՝ ուղևոր, բանակում՝ զինվոր, տարեկիցների շրջանում՝ ընկեր և այլն: Սրանք մարդու սոցիալական դիրքերն են, ստատուսները: Իսկ ստատուսի իրագործումն անվանում են սոցիալական դեր[1]:

Յուրաքանչյուր դեպքում , մենք քիչ թե շատ հստակորեն գիտակցում ենք, թե շրջապատողները մեզանից ինչպիսի վարք են սպասում: Եվ փորձում ենք արդարացնել նրանց ակնկալիքները, բայց երբ մեր վարքը չի համապատասխանում նրանց ակնկալիքներին, այսինքն՝ տվյալ իրադրության մեջ կամ խմբի կազմում մեր դերին, շրջապատողներն անմիջապես մեզ դա

[1] Варга А.Я. Системная семейная психотерапия. СПб: Речь; 2001. – 144с.

հասկացնում են: Ինչպե՞ս է դա կատարվում՝ խոժոռ հայացքով, դիտողություններով, ամոթանք տալով, որոշ բարիքներից զրկելով և այլն: Երբ աշակերտը դասարանում ճիշտ չի կատարում իր դերը, ապա ուսուցիչը նրա նկատմամբ կիրառում է վերոհիշյալ պատժամիջոցներից մեկը՝ փորձելով ճիշտ հունի մեջ դնել նրա դերակատարումը:

Այդ և բազմաթիվ այլ պատժամիջոցներ, որոնք օգտագործվում են մարդկանց սոցիալական դերերի կատարումը կարգավորելու նպատակով, կոչվում են բացասական սանկցիաներ:

Կան նաև դրական սանկցիաներ կամ խրախույսներ: Դրանք արդեն կիրառվում են մարդկաց ճիշտ և հաջող դերակատարումները խրախուսելու նպատակով, որպեսզի նրանք շարունակեն այդպես կամ ավելի լավ գործել: Որքան ավելի մեծ պատրաստակամությամբ է մարդն ընդունում և ստանձնում իր դերը, այնքան ավելի արդյունավետ է դերակատարումը:

Երբ զինվորը կարգապահ է լինում և քաջագործություններ է կատարում, հրամանատարությունը նրան խրախուսում է որոշ դրական սոցիալական սանկցիաների օգնությամբ:

Ընտանիքում ևս նրա յուրաքանչյուր անդամ ունի իր դիրքն ու համապատասխան դերը կամ դերերը[2]:

Այս դիրքերի և դերերի անունները մեզ քաջ հայտնի են. հայր, մայր, զավակներ, պապ, տատ և այլն: Ընտանքի դերային կազմը կախված է նրա տեսակից: Միջուկային տիպի ընտանիքներում նրանք ծնողներն են և զավակները: Ընտանիքում յուրաքանչյուր անդամի վարքը կախված է իր գրված դիրքից և համապատասխան դերից: Ընդ որում, մի փոխհարաբերության մեջ մարդը հանդես է գալիս մեկ դերով, մյուս փոխհարաբերության մեջ՝ այլ դերով:

Այսպես, ընտանքի հայրն ու մայրը միմյանց նկատմամբ ամուսիններ են , իսկ հոր և մոր դերը կատարում են իրենց զավակների հետ ունեցած փոխհարաբերություններում: Իսկ երբ, օրինակ, կինը սկսում է իր ամուսնու հետ վարվել, կարծես նա իր զավակը, երեխան լինի, ապա այդ սխալ դերակատարումն անմիջապես նկատվում ու գնահատվում է որպես տարօրինակություն, և իհարկե, հակազդեցություն է ծնում և՛ ամուսնու, և՛ նույնիսկ ընտանիքի մյուս անդամների կողմից: Կնոջ այդպիսի սխալ, տարօրինակ դերակատարման օրինակ կարող է հանդիսանալ ամուսնու

[2] Сатир В. Психотерапия семьи. СПб: Речь; 2000. – 190с.

նկատմամբ գերիսնամակալությունը, նրան երեխայի պես խնամելն ու պաշտպանելը, «սխալներն» ուղղելը, «խելք սովորեցնելը»:

Տարբեր ազգային և մշակույթային միջավայրերում ներընտանեկան դերերի մասին պատկերացումներում կան որոշ տարբերություններ, բայց կան նաև մեծ նմանություններ: Ահա այդ դերերի մասին ավանդական պատկերացումները.

- ընտանիքի հայրն այդ խմբի գլխավորն է, դրանով, տնտեսապես ապահովողն ու պաշտպանը: Նրա աշխատանքային գործունեությունը հիմնականում ընթանում է դրսի սոցիալական աշխարհում:

- Ըստ ավանդական պատկերացումների՝ որպես ամուսին նա պետք է հավատարիմ լինի իր կնոջը և միայն նրա հետ ինտիմ հարաբերություններ ունենա: Նա պետք է մասնակցի երեխաների դաստիարակության գործին, բայց հիմնականում որպես կարգ ու կանոն հաստատող հեղինակություն, որի առջև ընտանիքի մյուս անդամները պատկառանք, նույնիսկ որոշ չափով վախ են զգում:

- Նա ունի ոչ միայն դերային պարտականություններ, այլև իրավունքներ: Կարող է պահանջել, որ ընտանիքի անդամները ենթարկվեն որոշակի կանոնների, վարվեցողության որոշակի ձևեր յուրացնեն, պաշտպանեն ընտանիքի պատիվը, խնայող լինեն և այլն: Այլ կերպ ասած՝ հոր ներընտանեկան դերը, ինչպես և ամեն մի այլ սոցիալական դեր, կազմված է որոշակի իրավունքներից և պարտականություններից, որոնք ստացել են սոցիալական սպասումներ անունը:

Ընտանիքի մայրը ամուսնու հետ ունեցած հարաբերություններում հանդես է գալիս կնոջ դերում, մինչդեռ երեխաների հետ հարաբերվելիս նա մայր է: Ըստ այդմ էլ, ընտանիքում նա ունի իրավունքների և պարտականությունների երկու տարբեր համակարգեր, որոնք ամենասերտ կերպով կապված են իրար[3]:

Որպես կին՝ նա պետք է լինի ըստ մեր ավանդույթների, հեզ, պետք է ենթարկվի ամուսնուն, հիմնականում զբաղվի տնային գործերով: Նրա խնդիրն է ընտանեկան օջախը հաճելի դարձնել ընտանիքի անդամների

[3] Хьелл Л. Зиглер Д. Теории личности. СПб: Питер; 1999. – 106-108с.

համար: Դրսի աշխատանքը ավանդաբար, այդ թվում նաև հայ իրականության մեջ, կնոջ համար պատշաճ չի համարվել: Սակայն 20-րդ դարի կեսերից վիճակը կտրուկ փոխվել է, քանի որ կանանց զգալի մասը ստիպված աշխատել է և օգնել ամուսնուն:

Կնոջ դերի նկատմամբ մոտեցումն այդպիսի ավանդապաշտական բնույթ է կրել ոչ թե միայն մեզ մոտ, այլև ուրիշ երկրներում:

Տղամարդիկ ևս միշտ չէ, որ գոհ են իրենց ավանդական դերերից, քանի որ նրանց համար շատ դժվար է միայնակ կրել ընտանիքի առջև ունեցած տնտեսական պատասխանատվությունը: Այպիսի մեծ պատասխանատվությունը մշտական տագնապի ու անհագստության աղբյուր է հանդիսանում և ազդում է նաև ֆիզիկական վիճակի վրա՝ հանգեցնելով, այսպես կոչված, հոգեմարմնային հիվանդությունների: Այդպիսի գերծանրաբեռնված տղամարդկանց շրջանում բարձր է նաև մահացության աստիճանը: Ամբողջ աշխարհում գնալով մեծանում է աշխատող կանանց թիվը: Այժմ մեծ թիվ են կազմում այն կանայք, ովքեր համատեղում են ընտանեկան դերերը աշխատանքային դերերի հետ:

Բազմաթիվ կանայք ներկայումս այնպիսի աշխատանքներ են կատարում, որոնք անցյալում տղամարդկային գործ են համարվել: Կանանց կարելի է տեսնել գործարաններում, դպրոցներում, բժշկական հիմնարկներում, պետական ծառայության մեջ և այլուր: Մանկավարժության բնագավառում նրանք նույնիսկ մեծամասնություն են կազմում: Այդպես է նաև մեզ մոտ՝ Հայաստանում, և այս հանգամանքը լուրջ խնդիրներ է ծնում կապված, մասնավորապես, տղաների կրթության ու դաստիարակության հետ:

Բայց տղամարդիկ էլ այժմ այնպիսի աշխատանքների են կատարում, որոնք ավանդաբար կանացի են համարվել: Օրինակ՝ տղամարդկանց կարելի է տեսնել կրտսեր դպրոցական դասարանների ուսուցիչների, նույնիսկ մանկապարտեզի դաստիարակների, հեռախոսավարների, դայակների և այլ դերերում:

Հայաստանում բազմաթիվ տղամարդիկ չեն խորշում խանութների և նույնիսկ փողոցային վաճառողների դերերից:

Վերջապես, ավանդական պատկերացումներ կան ընտանիքում տղայի և աղջկա դերերի մասին:

Ընտանեկան հոգեբանական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում ընտանիքի ֆունկցիաների հիմնախնդրին: Հոգեթերապևտներ Է. Գ. Էյդեմիլլերը և Վ.Վ. Յուստիցկին ընտանիքի կարևորագույն ինտեգրացված բնութագրիչներ

են համարում ընտանիքի կառուցվածքը կամ բաղադրությունը, որը քանակական բնութագրիչ է և ներկայացնում է ընտանիքի զարգացումը փուլերով և ֆունկցիաները:

Ընտանեկան ֆունկցիաները բազմաթիվ են և՛ քանակական , և՛ որակական առումով: Նրանց դասակարգումը ևս բազմաթիվ է: Քննարկենք որոշ հեղինակներ կողմից առաջադրված ֆունկցաների խմբավորումները:

Է. Գ. Էյդեմիլլերը և Վ.Վ. Յուստիցկին տալիս են ընտանքի հետևյալ ֆունկցիաները.

1. դաստիարակչական,
2. կենցաղային,
3. հուզական,
4. հոգևոր շփման,
5. առաջնային սոցիալական վերահսկման,
6. սեքսուալ-էրոտիկ:

Համաձայն այս հեղինակների ֆունկցիաներից որևէ մեկի խանգարումը մի յուօրինակ առանձնահատկություն է, որը լուրջ դժվարություններ և խնդիրներ կարող է հրամցնել ընտանիքին՝ խաթարելով նրա ամրության հիմքերը[4]:

Ի. Վ. Գրեբեննիկովը կարևորում է ռեպրոդուկտիվ, տնտեսական, դաստիարակչական, կոմունակատիվ, հանգստի և ժամանցի կազմակերպման ֆունկցիաները ՝ որպես ընտանիքի հիմնական ֆունկցիաներ:

Ա. Գ. Խարչևը, Ա.Վ. Անտոնովը ընտանիքի ֆունկցիաները բաժանում են երկու խմբի՝ յուրահատուկ և ոչ յուրահատուկ ֆունկցիաներ:

Ըստ նրանց՝ յուրահատուկ են այն ֆունցկաները, որոնք պահպանվում են հասարակական ցանկացած փոխհարաբերությունների դեպքում, ինչպես երեխայի ծնունդը, դաստիարակումը և այլն:

Ոչ յուրահատուկ են սեփականության կուտակման և փոխանցման ֆունկցիաները, կարգավիճակի փոխանցման, սոցիալական ժառանգորդման, տնտեսության, աշխատանքի, ուսման և հանգստի կազմակերպման,

[4] Эйдемиллер Э.Г. Юстицкис В.В. Психология и психотерапия семьи. СПб: Питер; 2002. – 639с.

միկրոմթնոլորտի ստեղծման, լարվածության թուլացման, յուրաքանչյուր անդամի սեփական «ես»-ի պահպանման և մի շարք այլ ֆունկցիաներ[5] :

Մ. Ս. Մացկովսկին տալիս է ընտանիքի հիմնական ֆունկցիաների մի շարք՝ կապված ընտանքի կենսագործունեության կարևորագույն ոլորտների, պահանջմունքների հետ և ներկայացնում է դրանց դրսևորումները հասարակական և անհատական մակարդակներում:

Ժամանակակից ընտանիքներում առաջատար դերը պատկանում է ամուսիններին, որոնք ժամանակի հետ դառնում են ծնողներ:

Ընտանեկան բազմազան ֆունկցիաները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ամուսնական և ծնողական:

Ամուսնական ֆունկցիաների թվին կարելի է դասել հոգևոր շփման, տնտեսական-կենցաղային, կառավարման առաջնային սոցիալական վերահսկման, ներկայացուցչական ֆունկցիան, հուզական- էրոտիկ ֆունկցիան և այլն:

Ավանդական ընտանիքներում կա միտում՝ պահպանելու ավագ սերնդի կենսակերպը, ապրելաձևը: Սոցիալականացման մեխանիզմի հիմքում ընկած է ավագ սերնդի հեղինակությունը: Կա գործունեության որոշակի սահմանափակում հատուկ նորմերով և օրենքներով: Ժամանակակից ընտանիքներում անդամները ձգտում են ինքնահիրականացման և ինքնադրսևորման: Մեծերի հեղինակությունը չի փակում իր ետևից աշխարհը և մյուսների գործելու ճանապարհները, չի թելադրում օրինակները, որոնց պարտադիր պիտի հետևեն: Առկա է ընտրության հնարավորություն[6]:

Ավելացնենք, որ ընտանիքի ֆունկցիաները իրականացվում են որոշակի հիերարխիկ համակարգով: Այդ հիերարխիան ներկայացնում է, ավելի շուտ ցույց է տալիս ընտանիքի տեսակը, նրա զարգացումը, առանձնահատկությունները և փուլերը:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անդրադառնանք ընտանիքի մի շարք ֆունկցիաներին, որոնք առավել կարևոր են համարվում ընտանիքի կայունության համար:

Կենցաղային-տնտեսական, նյութական -արտադրական ֆունկցիա, հարկ է նշել, որ արտադրողական, հասարակական կարգերում ընտանքիը առաջնային արտադրողական խումբն էր, նա արտադրում էր սնունդ,

[5] Целуйко В.М. Психология современной семьи. Владоспресс, - М.: 2004.

[6] Гуленко В.В., Тищенко В.П. Юнг в школе М.: 1998.

հագուստ, նյութական անհրաժեշտության պարագաներ, գոյատևելու փոխանակելու համար: Հիմա տնտեսական ֆունկցիան բնորոշվում է իր անդամների եկամուտների միաձուլմամբ և, համաձայն անդամների պահանջներին, այդ եկամուտների ծախսով:

Տնտեսական-կենցաղային ֆունկցիան իրականացվում է որպես ընտանիքի կենցաղի կազմակերպման ձև:

Վերարտադրողական ֆունկցիան Ա. Գ. Խարչևը համարում է կարևորագույնը ընտանիքի ֆունկցիաներից, քանի որ այն ապահովում է ազգաբնակչության աճը:

Ժամանակակից ընտանիքներում այն ուղղորդվում է մի շարք հիմնախնդիրներով՝ երբեմն չլուծվող հակասություններով:

Մի կողմից երեխաները ամրության, կայություն գործոն է, մյուս կողմից՝ հիմնախնդիրների համախումբ: Հիմնախնդիրների թվին են դասվում ծնելիության նվազումը, մեկ երեխայի առկայությունը, հաճախ եսասիրության դրսևորումներուվ դաստիարակումը, արժեքային համակարգերի տարբերությունները տարբեր սերունդների մոտ և այլն:

Առաջնային սոցիալիզացիայի հիմնական ինստիտուտը ընտանքն է: Նա ապահովում է հասարակության անընդմեջ զարգացումը, մարդկայի ցեղի շարունակությունը, ժամանակի կապը:

Դաստիարակչական ֆունկցիան իրենից ներկայացնում է նաև մայրության և հայրության պահանջմունքների բավարարումը: Ընտանիքում դաստիարակչական գործընթացը համակցվում է հուզական երանգով՝ ի տարբերություն հասարակական կրթադաստիարակչական հիմնարկությունների: Ընտանիքում դաստիարակչական գործընթացը հուզական-դրական լիարժեք շփումը որշում է երեխաների լիարժեք և ներդաշնակ զարգացումը վաղ շրջանում: Տարիքի հետ դաստիարակչական ֆունկցիան չի կորցնում իր նշանակությունը, այլ փոխվում են միայն խնդիրները, միջոցները, մարտավարությունը, համագործակցության ձևերը: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, այս ֆունկցիան դիտվում է որպես ընտանիքի կարևորագույն սոցիալական ֆունկցիա:

Վերականգնողական ֆունկցիան ապահովում է նյարդա-հոգեկան առողջության, ընտանիքի ադամների հոգեկան կայունության, վերականգնման պայմանները, հանգստի, ժամանցի կազմակերպման ճանապարհով:

Հոգևոր շփման ֆունկցիան փոխադարձ հոգևեր հարստությունն է անդամների, ինֆորմացիայի փոխանակումը և քննարկումն առավել

նշանակալից մարդու հետ՝ քաղաքական, մասնագիտական, հասարակական կյանքից, շփումը գրական, երաժշտական, արվեստի ու արհեստի համատեքստում, որոնք պայմաններ են ստեղծում անձի անձնային ինտելեկտուալ լիարժեք զարգացման համար: Հուզականորեն օժանդակելու, նեցուկ լինելու ֆունկցիան առաջին հերթին անվտանգության և խմբին պատկանելու զգացողությունն է, հուզականորեն փոխհասկացումը և կարեկցանքը: Ժամանակակից ընտանիքներում այս ֆունկցիայի այլ ասպեկտ է հանդիսանում անձի մոտ ինքնարտահայտման և ինքնակտուալիզացիայի ձևավորումը:

Ժամանակակից հասարակարգում սերը համարվում է էական բնութագրիչ ընտանեկան հարաբերություններին: Ամուսնությունը կնքվում է առաջին հերթին, երբ առկա է սերը: Կամ ամուսնալուծությունների պատճառները, մեծամասամբ, գտնվում են ամուսինների հուզական, զգացմունքային, անձնային հարաբերությունների ոլորտում[7]:

Ամուսնալուծությունների ընթացքում ամուսիններն ավելի շատ հենվում են սիրտ-հուզական մտերմության կորստի վրա, հուզական օժանդակության և փոխըմբռնման բացակայության վրա:

Սոցիալական կարգավորման, վերահսկման և խնամակալության ֆունկցիա, որն ընդգրկում է երեխաների, ծերերի և հիվանդների խնամքը:

Հոգեթերապևտիկ ֆունկցիան ապահովումն է ընտանիքի բարենպաստ հոգեբանական մթնոլորտի, դրական հուզազգացմունքային դաշտի, հաղորդակցման, ինչպես նաև բարոյական ու հուզական օժանդակությունը, ընտանիքի անդամների փոխադարձ ընդունումն ու ըմբռնումը:

Անվտանգության ֆունկցիան ենթադրում է կենսաբանական և սոցիալական կեցությունը ընտանիքի անդամների, պաշտպանությունը՝ հոգեբանական և ֆիզիկական վտանգներից, որոնք բխում են շրջապատից: Սրանում արտահայտվում է մարդկանց հետաքրքրությունը երկարատև գոյության, կայունության և ապագայի նկատմամբ վստահության:

Ընտանեկան կյանքը ենթարկվում է որոշակի կարգի, կարգավորվում է որոշակի կանոններով և նորմերով, որը թույլ է տալիս ապահովագրել ընտանիքը ոչ հաճելի իրադարձություններից[8]:

Ա. Մասլոուն դիտարկում էր ծնողական վեճերը, ֆիզիկական վիրավորանքները, բաժանումը, ամուսնալուծությունը և մահը, որպես

[7] Хрестоматия: Семейная психотерапия. СПб: Речь; 2000. – 305-307с

[8] Навайтис Г. Планы семейного (не) счастья. Москва-Воронеж: НПО «МОДЭКЂ; 1998. – 67с.

այնպիսի պահեր, որոնք աառնձնահատուկ վնասակար են երեխայի բարեկեցության համար:

Այս գործոնները նրա շրջապատը դարձնում են ոչ կայուն, անկանխատեսելի և , հետևաբար, ոչ վստահելի ու անապահով:

Վտանգի ժամանակ ցանկացած մարդ ձգտում է լինել հարազատի կողքին: Ընտանիքում մենք զգում ենք մեր կյանքի արժեքը, ջանք ենք գործադրում վախերը, ցավը, հիվանդությունը հաղթահարելու համար: Պահվածքը արտակարգ իրավիճակներում հաստատում է պատրաստակամություն մարդկանց ինքնազոհաբերության իր հարազատների և մտերիմների նկատմամբ: Գոյատևելու, ապրելու հնարավորությունները մեծանում են, եթե որևէ մեկը մեր մասին հոգ է տանում: Անվտանգության ֆունկցիան դրսևորվում է նրանում, որ ընտանիքը ներքուստ հակառակվում է փոփոխություններին և նորագոյացումներին, տեսնելով նրանցում վտանգ իրենց գոյատևման, կայունության: Բարեկեցության ֆունկցիան իր մեջ ներառում է երազանքները և հույսերը՝ յուրաքանչյուր մարդու ընտանեկան երջանկության ձեռք բերման վերաբերյալ: «Երջանիկ ընտանիք» հասկացությունը մարդկանց մոտ ունի մի շարք մեկնաբանություններ: Ոմանց համար «երջանիկ ընտանիքը» հայացքների ընդհանրությունն է և փոխըմբռնումը: Մյուսների համար՝ նյութական ապահովվածությունը, երրորդների համար՝ տաղանդը և երեխաների հաջողությունները: Ընտանեկան երջանկության սիմվոլները կարող են լինել առանձին բնակարանը, համատեղ ճամփորդությունը, երեխայի ծննդյան օրը, երկար բաժանումից հետո հանդիպման երջանկությունը, ուրախությունը և այլն[9]:

Այս բազմազանությունը կարծիքների, հայացքների միավորում է մեկ ընդհանրությամբ ՝ երջանկությունը, որպես բավարարվածության վիճակ, առավել շատ սփռվում է ընտանիքներում : Ընտանիքում են իրականանում մեր ձգտումներն ու ցանկությունները, շրջապատից ծագող վիրավորանքները փոխհատուցվում են, խրախուսվում են ընդունակություններն ու հաջողությունները: Ընտանիքի անդամները զուգակցում են մեկմեկու հաջողություններն ու ուրախությունները:

Բավարարվածության զգացողությունը կա նաև այն ժամանակ, երբ որևէ անդամ լավ բան է անում մյուսների համար:

[9] Еникеева Д. Секрет семейного счастья. М: Астрель; 2001. – 186с.

Ընտանեկան երջանկությունը կոլեկտիվ ստեղծագործության արդյունք է: Ընտանիքում՝ որպես համակարգի հնարավոր չէ, որևէ մեկի երջանկությունն ու հաջողությունը չուրախացնի կամ դժբախտությունը չանհանգստացնի մյուսներին, լինի մեկուսացված:

Դրա համար էլ այդպես գնահատվում է համակրանքը և սիրո գործոնը, որոնց համատեղ ուժերից կախված է գործի բնույթը և գործունեության ցանկալի արդյունքը:

Ընտանեկան շփումը բյուրեղացնում է հաճելի զգացողությունները, ծնում է երևակայություն, մարդուն հնարավորություն է տալիս խորհրդածելու: Մեծերը ստանում են բավարարվածություն, որ ժամանակ են անցկացնում երեխաների հետ: Զբոսանքը, խաղերը, սպորտային մրցումները, կրկեսային և թատերական ներկայացումների դիտումը այս բոլորի նախապայմանն է: Անբարենպաստ ընտանիքներից դուրս եկած մարդիկ ունեն դժվարություններ՝ ուրախանալու և լիցքաթափվելու:

Ուրախանալու միտքը նրանց թվում է «անթույլատրելի»:

Այսպիսով, ինչպես ցանկացած համակարգ, ընտանիքը կատարում է բազմաթիվ ֆունկցիաներ, որոնք արտացոլում են ընտանիքի զարգացումն ու ձևավորումը, նրա առանձնահատկություններն ու յուրահատկություններն և այլն:

Ամփոփելով ընտանիքի ֆունկցիաները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- Ընտանիքի ֆունկցիան այն դերն է, որ ընտանքիը կատարում է անհատի և հասարակության անկատմամբ,
- Դա ընտանիքի հատկանիշների արտաքին դրսևորումներն են հասարակության հետ իր փոխհարաբերությունների համակարգում,
- Դա ընտանիքի ներսում տեղի ունեցած պրոցեսների միջև կախվածությունն է,
- Դա ընտանիքի անդամների այն գործունեությունն է, որն ուղղված է իրենց պահանջմունքների բավարարմանը: Յուրաքանչյուր ֆունկցիա համապատասխանում է որոշակի պահանջմունքի կամ պահանջմունքների խմբի՝ հայրության, մայրության, սիրո, ֆիզիկական մտերմության, հոգևոր շփման և այլն:

- Ընտանիքի ֆունկցիան նաև սոցիալական դերերի բովանդակությունն է:

Գլուխ 2. Հայ ընտանիքի հասարակական էությունը

Ընտանիքի՝ որպես սոցիալական խմբավորման, մյուս ցուցանիշը ընտանեկան արժեքներն են:

Ա.Վ. Դարմոդեխինի կարծիքով ընտանիքի և ընտանեկան արժեքների ամրապնդումը, շատ կարևոր է իրագործելու ընտանիքի կենսագործունեության փորձաքննություն և ընդունելու տիրական այնպիսի վճիռներ, որոնք համապատասխանում են ընտանիքի զարգացման պայմաններին ու կարիքներին:

Որպես փոքր խումբ, ընտանիքը հիմնված է արյունակցական կապի, կենցաղի ընդհանրության, համախմբվածության վրա և գոյատևում է շնորհիվ փոխադարձ օգնության, բարոյական պատասխանատվության և այլն:

Ընտանիքի առավել էական ցուցանիշը արյունակցական կապի առկայությունն է, մնացածը այնպիսի երկրորդական հայտանիշներ են, որոնք ձևավորվում են առաջինի շնորհիվ[10]:

Հասարակական կյանքի սկիզբն ու հիմքը, սոցիալական կազմակերպության առաջնային ձևը նահապետական ընտանիքն է: Հիմնված լինելով նախնիների մշակույթի և տոհմային ավանդույթների վրա՝ նահապետական ընտանիքը դառնում է ազգի և պետության առաջացման աղբյուր: Սոցիումի հիմքը , իր դրսևորման երեք ձևերով նահապետական ընտանիք, ցեղային միություն և ազգային համակեցություն, կազմում են փոխկապակցված երկու սկզբնակետ. էթնիկական և ավանդական:

Ըստ որում, նախորդող սոցիալական կեցության ձևերից ազգային համակեցությունը տարբերվում է տոհմային և մշակութային ավանդույթներով: Վերջինիս հիման վրա զարգանում է ազգային ինքնագիտակցությունը, որի պահպանման գլխավոր ոլորտը ընտանքին է: «Հենց ընտանիքն է, որ պահպանում է ազգային ավանդույթները, տոհմային առաքինությունները, լեզուն և կրոնը, ազգի բարոյական հատկանիշները: Բացի այդ, ընտանիքը ազգային ոգու առավել ամուր հենարանն է, ինչից ժողովրդին զրկել չի կարելի: Որքան ընտանիքն ամուր է, այդքան անսասան են ազգն ու եկեղեցին»: Ըստ էության, ընտանիքը համարվում է ազգային ինքնության ձևավորման ու պահպանման, ազգի բարոյական առողջացման ու կատարելագործման գլխավոր գործոն:

Միաժամանակ, ինչպես օրինակ հայության դեպքում, ընտանիքը հանդես է գալիս որպես այն հիմնական ձևը, ուր իր գոյության պատմության ողջ ընթացքում Հայոց Եկեղեցին իրագործել է հայ ազգի սոցիալական և իրավա-քաղաքական կազմակերպչի, նրա հոգևոր դաստիարակչի գործառույթը:

[10] ՀՀ Լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ – Ընտանիք և ազգային հոգեբանություն, Երևան 1991:

Ընտանիքը, այսպիսով, հանդես է գալիս որպես ազգի բաղադրատարր, իսկ ազգը՝ մարդկության կազմավորման տարր: Ըստ էության, տվյալ համատեքստում հասարակական շարժումը հանդես է գալիս որպես առանձին ազգերի առաջադիմական բնութագիծ, որի զարգացման մակարդակի ցուցանիշը ընտանքին է:

Ընտանիքի ինստիտուտն ամրակցվում է հարաբերությունների այնպիսի կայուն ամբողջություն, որոնց գործառույթներին կարելի է վերագրել.

- ավանդաբար ձևավորված ամուսնական հարաբերությունների օրիանականացումը համապատասխան փատաթղթերի և ձևերի հիման վրա,
- ընտանեկան հարաբերությունների սոցիալական կարգավորում,
- ունեցվածքային և քաղաքացիական իրավունքների պաշտպանություն,
- ընտանիքի նոր անդամների դաստիարակության, կրթության, սոցիալ-մշակութային հարմարման օգնության ցուցաբերում,
- ընտանիքի ինքնուրույն գոյության ապահովում:

Լինելով հասարակության ենթահամակարգ՝ ընտանիքը փոխվում է նրա հետ միասին: Որպես ենթահամակարգ, նրա մեկուսացվածությունը բոլորովին չի նշանակում օտարում սոցիալական փոփոխություններից, հատկապես եթե դրանք, մյուս սոցիալական ինստիտուտների կողքին կարող են վերարտադրվել նաև ընտանիքի կողմից[11]:

Ընտանիքի ինստիտուտի ներսում փոփոխությունները ամենից հաճախ դիտարկվում են տնտեսական հարցերի առնչությամբ: Համակարգային դիտարկման դեպքում կարելի է տեսնել նրա ուրիշ, սոցիալական փոփոխությունների տեսանկյունից ոչ պակաս կարևոր և նշանակալից փոփոխություններ:

Դրանցից են ընտանիքի այն նոր տիպերի կազմավորումը, որոնք էապես ազդում են ավանդաբար ձևավորված գործառույթների վրա: Ընդունված է տարանջատել միամուսնական ու բազմամուսնական, ընդլայնված ու նուկլեար, լրիվ և ոչ լրիվ, ապակենտրոնացված և ամուսնական բազմանդամ և փոքրանդամ ընտանիքները:

Հենց այս բոլոր տարատեսակներն են կազմում ընտանիքի ինստիտուտում փոփոխությունների խայտաբղետ պատկերը: Սակայն տվյալ դինամիկան նրա միանշանակ ճշգրիտ գնահատականը չէ:

---

[11] Գասպարյան Յու. – Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում, Երևան 2003, էջ 45-47:

Փոփոխվող ընտանիքի նպատակները , խնդիրներն ու գործունեությունը չեն կարող չդրսևորել ներկա գործընթացների շարժունության մեջ, և այդ պատճառով հրատապ է այն պետա-ընտանեկան քաղաքականությունը, որի ինքնատիպությունը թույլ չի տալիս շփոթել պետական քաղաքականության մյուս ոլորտների հետ:

Ժողովրդական ծառայությունների և հետազոտական կենտրոնների խոստովանությամբ , ընտանիքի ինստիտուտի վիճակը այսօր դիտարկվում է որպես կրիտիկական: Որպես ճգնաժամի հիմնական պատճառներ նշվում են.

- ամուսնալուծությունների բարձր մակարդակով փաստարկված ընտանիքի անկայունությունը,
- հարաբերությունների բախումայնությունը ընտանիքի անդամների միջև,
- զանգվածային սակավազավակությունը,
- երեխաների սոցիալականացման ցածր արդյունավետությունը:

Նշված պայմաններից բացի, Հայաստանում ընտանիքի ճգնաժամը մեծապես պայմանավորված է նաև երիտասարդության արտագաղթով և ընտանիքների մեծամասնության սոցիալ-տնտեսական դժվարին կացությամբ:

Սերունդների սոցիալականացումը, որը հասարակության վերարտադրության գործընթաց է, սերտորեն առնչվում է ավանդույթների հետ: Հիմնական սոցիալական խնդիրներից մեկն այն է, որ երիտասարդությունը արժեքային համակարգը ամբողջությամբ չի ընդունում: Խնդրի լուծումը երիտասարդ սերնդի կողմից նախնիների հանրային արժեքների ընդունման մեջ է:

Հարկ է հասարակական նոր կողմնորոշման հետ տվյալ արժեքները այնպես համատեղել, որ երիտասարդությունը կարողանա պահպանել իր նախնիների ավանդույթները: Ծնվող նոր սոցիալականության մեջ սեփական տեղի որոնումները երիտասարդությանը ստիպում են կատարել մի շարք տեղաշարժեր, որոնք սակայն, զգալի արդյունքներ չեն տալիս: Պատահական չէ, որ շատ երիտասարդներ չեն ցանկանում ընտանիք կազմել, քանի որ վստահ չեն վաղվա օրվան:

Նախնիների ոգով երիտասարդության դաստիարակության ձևերից մեկը ամուսնական կյանքին նախապատրաստումն է ամուր ընտանիք ստեղծելու նպատակով, քանի որ վերջինիս ճգնաժամը հանգեցնում է նրան, որ երեխաները կարծես դառնում են ավելորդ:

Շատ մասնագետներ համարում են, որ դա ապագայի հանդեպ պատասխանատվության ժամանակակից հիմնախնդիրն է: Եթե

երիտասարդների հանդեպ չդրսևորվի համապատասխան ուշադրություն, եթե նրանք գիտակցեն, որ հայրերը միայն իրենց մասին են հոգում, ապա հասունանալով այդ երիտասարդները նույնպես միայն իրենց մասին կհոգան: Մեր հանրապետությանը, հասարակությանը դա սպառնում է կործանմամբ:

Ավանդական հասարակության մեջ գոյություն ուներ կենսական ցիկլի հստակ մոդել: Պատանեկությունը կապվում էր ակտիվ սոցիալականության ուսուցման և դաստիարակության իրականացման հետ, իսկ հասունությունը աշխատանքային գործունեության սկզբի, ծնողական ընտանիքից հեռանալու և սեփականը ստեղծելու հետ:

Երտասարդության դաստիարակության հիմնական խնդիրը մեզ համար ամուր ընտանիքի ստեղծման նպատակով ամուսինների միջև բախումների ծագման հավանականության նվազեցումն է:

Նման աշխատանքի վերջնական նպատակը ամուսնալուծությունների թվի նվազեցումն է վաղահաս, չմտածված և թեթևամիտ ամուսնությունների կրճատման ճանապարհով:

Տվյալ խնդիրը հատկապես սուր է դրված մեր օրերում, երբ ընտանիքների մեծ մասը զգում է իր նվազագույն կարիքների բավարարման համար անհրաժեշտ միջոցների պակաս: Ի թիվս այլոց, տվյալ գործոնը բացասաբար է անդրադառնում ստեղծված ընտանիքի ամրության վրա: Երբեմն ընտանիքը քայքայվում է այն պատճառով, որ երիտասարդ ամուսինները բավարար նախապատրաստված չեն ամուսնական կյանքին, չկշռադատված ու թեթևամտորեն են վերաբերվում այդ կարևոր հիմնահարցին: Ըստ որում ամուսնական շատ երիտասարդ զույգեր հեշտությամբ են վերապրում ամուսնալուծություն և նույն հեշտությամբ ամուսնանում են երկրորդ, երրորդ , երբեմն չորրորդ անգամ:

Բնութագրելով շատ երիտասարդ ծնողների թեթևամիտ վերաբերմունքը ընտանիք կազմելու հանդեպ, Վ. Բելովը գրում է.«...ընտանիքի քայքայումըն անձնականորեն դարձել է առօրյա և ոչ այնքան վտանգավոր գործ: Սակայն երեխայի համար դա միշտ խորը հոգեկան ապրումներ են , եթե ոչ կենսական աղետ»:

Կյանքում ամեն ինչ փոխկապված է: Օրինակ, ինչքան ավելի շատ են ճշմարիտ ու փոխադարձ սիրո հիման վրա ամուսնությունները, այնքան ավելի ամուր են ընտանքն ու հասարակությունը, ինչքան ընտանիքի պահպանման մեջ ավելի մեծ է երիատասարդ ծնողների

շահագրգռվածությունը, այնքան ավելի է հեռանկարային է երեխաների ապագան, որքան ավելի մեծ է ծնողների պատասխանատվությունը միմյանց և երեխաների հանդեպ, այնքան ընտանիքի բոլոր անդամների միջև ավելի արագ են ամրապնդվում անշահախնդիր ու ջերմ փոխահարաբերությունները:

Դրա համար էլ գտնում ենք, որ երիտասարդ ամուսինները պետք է ոչ միայն պահպանեն սերը ընտանիքում, մեծացնեն ու դաստիարակեն լավ երեխաներ, այլև միմյանց հանդեպ մշակեն անշահախնդիր հարաբերություններ:

Եզրակացություն

Այսպիսով պատանիներին և աղջիկներին ամուսնական կյանքին նախապատրաստելու հարցում տարբեր ընտանիքների մոտեցումները տարբեր են: Հայրերի պասիվության պատճառով երեխաների դաստիարակության հիմնական բեռը շատ ընտանիքներում ընկնում է մայրերի վրա: Ավելին, ծնողների մեջ հազվագյուտ են այն հայրերը, որոնք կարող են նույն պարբերականությամբ և արդյունավետության զբաղվել իրենց տղայի հետ այնպես, ինչպես աղջկա հետ կարողանում են զբաղվել մայրերը:

Բազմաթիվ հետազոտությունների և հարցումների տվյալները ցույց են տալիս, որ առաջին ամուսնության ժամանակ տղամարդկանց ավելի քան 70 տոկոսը 20-25 տարեկան է եղել, իսկ կանանց մոտ 80 տոկոսը՝ 18-23 տարեկան: Ժամանակակից զարգացման հակասական գործընթացները նվազեցրին ընտանիքի, շրջապատի, դպրոցի դաստիարակչական հնարավորությունները:

Ճգնաժամի մեջ է նաև կրթական համակարգը, լրացուցիչ լուրջ հիմնահարցեր է ծնում ընտանիքի և դպրոցի միջև կապերի չդասավորվածությունը:

Հետևաբար նման իրավիճակում անհրաժեշտ է ուժեղացնել ընտանիքի սոցիալականացման մեխանիզմը՝ նոր հնարավորությունների ստեղծման հաշվին:

Ցանկալի կլիներ սոցիալականացման երեք հսկաներին՝ ընտանիքին, փողոցին, դպրոցին, միանար նոր ինտիտուտ՝ պետության երիտասարդական քաղաքականությունը:

Ցավոք այն մեր հանրապետությունում այն դեռևս մշակված չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Յու. – Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում, Երևան 2003:
2. ՀՀ Լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ – Ընտանիք և ազգային հոգեբանություն, Երևան 1991:
3. Варга А.Я. Системная семейная психотерапия. СПб: Речь; 2001. – 144с.
4. Сатир В. Психотерапия семьи. СПб: Речь; 2000. – 290с.
5. Хьелл Л. Зиглер Д. Теории личности. СПб: Питер; 1999. – 606с.
6. Эйдемиллер Э.Г. Юстицкис В.В. Психология и психотерапия семьи. СПб: Питер; 2002. – 639с.

7. Целуйко В.М. Психология современной семьи. Владоспресс, - М.: 2004.
8. Гуленко В.В., Тищенко В.П. Юнг в школе М.: 1998.
9. Хрестоматия: Семейная психотерапия. СПб: Речь; 2000. – 508с.
10. Навайтис Г. Планы семейного (не) счастья. Москва-Воронеж: НПО «МОДЭКѢ; 1998. – 167с.
11. Еникеева Д. Секрет семейного счастья. М: Астрель; 2001. – 286с.